

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ.

Ռ Ն Ք Ե Ղ Զ Ի Ի Ր.

Ռնգեղջիւրը, որ տաճկերէն կըսուի քն-կեսան, եւ երբեմն կերկեսան կամ զերկեսան, տաք երկրի կենդանիներէն մէկն է, եւ ռնգեղջիւր ըսուելուն պատճառը այս է որ ռնգին՝ այսինքն քթին վրայ եղջիւր մը ունի: Հին ատենը կարծիք մը կար թէ այս եղջիւրը զարմանալի յատկութիւն մը ունի, այսինքն որ եւ իցէ թոյն կկտրէ. ուստի հարուստ մարդիկ որ վախ կունենային թու-նաւորուելէն, անբաւ ստակ տալով՝ կնայէին որ այն եղջիւրէն շինուած գաւաթներ ու պնակներ ձեռք ձգեն:

Ռնգեղջիւրը գրեթէ փղին պէս ուժով է, բայց փղէն աւելի վտանգաւոր. վասն զի վերջին աստիճանի անխելք ու կատաղի է, եւ առանց ամենեւին պատճառի մը յանկարծ հանդարտ կեցած ատենը սոսկալի կերպով կկատղի. այն միջոցին նորա բոլոր ծանրա-գանգաղ մարմինը խելքէ գուրս թեթեւու-թիւն մը կառնու, ասդիս անգին կցաթքըտէ, եւ յետոյ սրընթաց ձիու մը պէս գլուխը կառնու կվազէ, առջեւը ինչ որ պատահի կկտրէ, կկործանէ, կկոխկըռտէ, եւ այնպէս սոսկալի ձայնով կգոռայ որ մինչեւ ամենէն աւելի քաջասիրտ որսորդին վրայ ալ սար-սափ կձգէ:

Ուրիշ գաղանները ոչ երբեք նորա վրայ կյարձրկին. վասն զի գիտեն որ հետը գլուխ չեն ելներ. այնպէս որ շատ անգամ կատաղի վագրն ալ եթէ յանկարծ անտառին մէջ ա-նոր պատահի, իսկոյն կձգէ կիսախչի: Բայց այս ալ կայ որ ռնգեղջիւրը արիւնարբու գա-

ղան մը չէ. իրեն կերակուրը տերեւ, խոտ ու ծառերու արմատներ են. եւ որովհետեւ թշնամի չունի որ հետը կռուրտի, իւր զէնքը՝ այսինքն եղջիւրը կբանեցընէ միայն մանր ծառերը մէկգի ընելու եւ թաւ անտառնե-րու մէջ իրեն ճամբայ բանալու համար:

Շատ կսիրէ ծառերու մէջ գետի քով պը-տըտիլ, եւ կշտանալէն ետքը ցելսի մէջ թա-ւալելով կզուարճանայ: Մեծութիւնը չորս կամ հինգ կանգուն է, եւ բոլոր մարմինը այնպիսի ամուր կաշիով պատած է որ եր-կու մատ հաստութիւն ունի եւ վրան հրա-ցանի դնտակ չիբանիր: Իրեն շոշափելիքը կարելի է ըսել թէ միայն վերի պոկունքն է, վասն զի միայն այն կտորը բաւական կակուղ է մարմնոյն միւս կտորներուն նայելով եւ գա-ղանը անով կփրցնէ ու կուտէ իրեն կերակուրը:

Հինգ տեսակէն աւելի կհամրուի ռնգեղ-ջիւրը, ամենուն ալ ոտքը երեք երեք մատ ունի սմբակով կամ կճղակով, եւ քթին վրայ մէկ կամ երկու եղջիւր: Ափրիկէի եւ Հնդ-կաստանի Սումատրա կղզւոյն ռնգեղջիւրը երկու եղջիւր ունի ետեւէ ետեւ, աչքերուն քովինը փոքր. իսկ բուն Հնդկաստանի ու Եւրա կղզւոյն ռնգեղջիւրը մէկ եղջիւր մը միայն ունի:

Շատ մարդիկ փորձեր են որ ռնգեղջիւրը ընտանեցնեն, բայց անօգուտ. հաղիւ թէ կսկսի կամ այնպէս կերելի որ սկսեր է ի-րեն չորս գին պատ քաշուած տեղւոյն վար-ժիլ, յանկարծակի ասդիս անգին կզարնուի եւ կարծես թէ ինքզինքը կուզէ մեռցընել:

